ԱՐՄԵՆՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ արդարադատության նախարարության դատական հանձնարարությունների բաժնի պետ,
իրավագիտության մագիստրոս, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի եվրոպական իրավունքի և իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ՎԵՐԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆ

Եվրոպական իրավունքը առավել դինամիկ իրավական համակարգերից է: Վերջին տարիների ընթացքում այն ենթարկվել է մի շարք առանցքային փոփոխությունների, որոնք կապված են եվրոպական ինտեգրման գործընթացի, ինչպես նաև այդ ինտեգրման կայացման և կատարելագործման իրավական հիմքը կազմող հիմնադիր ակտեր մշակելու և գործողության մեջ դնելու հետ:

Գործելով իր իրավասության շրջանակներում՝ Արդարադատության եվրոպական դատարանը ձևակերպել է ինտեգրացիոն գործընթացի զարգացման համար կենսական նշանակության հայեցակարգային դրույթներ, որոնք և հանդիսանում են այս հոդվածի ուսումնասիրության առարկան:

Հիմնարար բառեր *- Եվրոպական իրավունք, Արդարադատության եվրոպական դատարան, ԵՄ նախադեպային օրենսդրություն, ԵՄ ինստիտուտներ, ինտեգրացիոն գործընթաց:*

Եվրոպական միության իրավական համակարգի զարգացման մեջ ԵՄ դատարանի դերն արժանի է ամենաբարձր գնահատականի: Կարելի է ամենայն վստահությամբ պնդել, որ և՛ Եվրոպական Միությունը, և՛ նրա իրավունքը կլինեին ուրիշ՝ պակաս զարգացած, ժողովրդավարական, օժտված ավելի փոքր իրավասությամբ և ցածր հեղինակությամբ, եթե ԵՄ ինստիտուտների համակարգում չլիներ այնպիսի մարմին, ինչպիսին Եվրոպական դատարանն է:

ԵՄ Դատարանը շարունակում է մնալ ԵՄ ժողովուրդների կյանքի բոլոր ոլորտներում ինտեգրման գործընթացների ամենակատիվ «շարժիչներից» մեկը: Եվրոպական դատարանի հեղինակության և ազդեցության մեծացմանը նպաստել են Ամստերդամի, Նիցցայի և վերջերս էլ Լիսաբոնի պայմանագրերով նրա իրավազորության ընդլայնումը[1]:

Դատարանին է պատկանում եվրոպական իրավունքի ձևավորման և զարգացման, ինտեգրացիոն կառույցների կայացման և զարգացման կարևորագույն դերը: Որպես անկախ մասնագիտացված մարմին՝ դատարանի ստեղծումը դիտարկվել է որպես ինտեգրացիոն համայնքների նպատակների իրականացման, նրանց միասնականության երաշխիք:

Ի սկզբանե հիմնադրված լինելով Քարածխի և պողպատի եվրոպական միության շրջանակներում՝ Եվրոպական տնտեսական միության և Եվրատոմի ստեղծման հետ միասին այն միաձուլման արդյունքում վերակազմավորվել է նրանց համար ընդհանուր Եվրոպական համայնքների դատարանի[2]:

Եվրոպական համայնքների դատարանը, որը կոչված է ապահովել Եվրոպական իրավունքի միանման ընկալում և կիրառություն, համեմատաբար կարճ ժամանակահատվածում կարողացավ հաստատվել որպես բարձր հեղինակություն ունեցող և անկողմնակալ մարմին:

Դատարանը Եվրոպական համայնքների և Եվրոպական միության հինգ ինստիտուտներից մեկն է: Ինչպես մյուս ինստիտուտները, նրա իրավական կարգավիճակի հիմքերն ամրագրված են Եվրոպական միության մասին պայմանագրի «Համայնքների ինստիտուտները» վերտառությամբ 5-րդ բաժնում: Միևնույն ժամանակ, դատարանը ԵՄ ինստիտուտներից միակն է, որն ունի իր կանոնադրությունը՝ ստատուտը: Կանոնադրությամբ են սահմանված Դատարանի կազմակերպական և դատավարական խնդիրները, ինչպես նաև ԵՄ դատական համակարգի գործունեության կարգը:

1993 թվականից սկսած Դատարանը, ինչպես

www.lawinstitute.am

և Խորհուրդը, Հանձնաժողովը, Եվրոպական խորհրդարանը, հանդես է գալիս որպես Եվրոպական միության միասնական ինստիտուտ[3]:

Դատարանի գործող կանոնադրությունն ընդունվել է 2001 թվականին ստորագրված Նիցցայի պայմանագրի հետ միաժամանակ և որպես արձանագրություն կցվել է Եվրոպական միության հիմնադիր փաստաթղթերին (դատարանի կանոնադրության արձանագրություն): Այն կազմված է վեց բաժիններից՝ 70 հոդվածներով, ինչպես նաև դրանց կից՝ մասնագիտացված դատարանների կանոններից:

Գործելով իր իրավասության շրջանակներում՝ դատարանը ձևակերպեց ինտեգրացիոն գործընթացի զարգացման համար կենսական նշանակության հայեցակարգային դրույթներ:

Արդարադատության եվրոպական դատարանը մեկնաբանում է Եվրոպական միության օրենսդրությունը՝ նպատակ ունենալով ապահովել ԵՄ բոլոր անդամ երկրների կողմից դրա միատեսակ կիրառությունը: Այն լուծում է նաև ԵՄ անդամ երկրների կառավարությունների և ԵՄ ինստիտուտների միջև ծագող իրավական վեճերը: Մասնավոր անձինք, կազմակերպությունները կամ ընկերությունները նույնպես կարող են հայց ներկայացնել դատարան, եթե նրանք գտնում են, որ իրենց իրավունքները խախտվել են ԵՄ հաստատությունների կողմից[4]:

Արդարադատության եվրոպական դատարանը կազմավորվում է 27 դատավորներից՝ յուրաքանչյուր ԵՄ երկրից մեկական դատավոր: Նրանք նշանակվում են վեց տարի ժամկետով՝ վերընտրման իրավունքով: Նրանք ընտրվում են անհատներից, որոնց անկախությունը կասկածներ չի հարուցում, և որոնք համապատասխանում են դատական բարձր պաշտոն զբաղեցնելու համար անհրաժեշտ որակավորմանը իրենց երկրներում:

Դատարանին աջակցում են 8 գլխավոր փաստաբանները, որոնց աշխատանքը կայանում է դատարանում հարուցված գործերի վերաբերյալ կարծիքներ ներկայացնելու մեջ: Կարծիքները ներկայացվում են հրապարակայնորեն և բացարձակ անկողմնակալ:

Գլխավոր փաստաբանը դատարանի անդամների երկրորդ՝ լրացուցիչ, կատեգորիա է: Հիշյալ ինստիտուտը ներմուծվել է Ֆրանսիայի դատական համակարգից, որտեղ նման պաշտոն գոյություն է ունեցել դեռևս միջնադարում (avocat general): Գլխավոր փաստաբանի գործառույթները մասամբ հիշեցնում են Հայաստանում դատախազի դերը, որի ներկայությունը և կարծիքը որոշ կարգի գործերի դատաքննության ժամանակ պարտադիր է:

Գլխավոր փաստաբանի եզրակացությունները ծառայում են նաև որպես իրավունքի և Եվրոպական միության իրավական դոկտրինի վերաբերյալ տեղեկատվական արժեքավոր աղբյուր: Ինչպես և Արդարադատության եվրոպական դատարանի որոշումները, դրանք թարգմանվում են ԵՄ բոլոր պաշտոնական լեզուներով և ուսումնասիրվում են իրավագետների և պրակտիկ իրավաբանների կողմից:

Ինչպես նշել ենք վերը, ԵՄ արդարադատության դատարանի գլխավոր փաստաբաններն ութն են, և փորձը ցույց է տալիս, որ այդ քանակը բավարար չէ, քանի որ Դատարանի կողմից քննվող գործերի քանակը հասնում է հարյուրավորների, և դրանցից յուրաքանչյուրի համար պետք է նշանակվի մեկ գլխավոր փաստաբան:

Այս կապակցությամբ ԵՄ մասին պայմանագիրը թույլ է տալիս ավելացնել գլխավոր փաստաբանների թիվը դատարանի միջնորդությամբ՝ ԵՄ խորհրդի որոշման համաձայն:

Եթե քննվող գործը չի բարձրացնում իրավունքի բնագավառում նոր խնդիրներ, ապա դատարանը կարող է որոշում կայացնել առանց գլխավոր փաստաբանի մասնակցության (2001թ. Կանոնադրության 20-րդ հոդված): Այսպիսով, գլխավոր փաստաբանները հնարավորություն ունեն կենտրոնանալու իրականում իրավական իմաստով բարդ գործերի վերլուծության վրա, որոնք ի վիճակի են տալ նոր լիցք ԵՄ նախադեպային իրավունքի զարգացմանը:

Յուրաքանչյուր դատավոր և գլխավոր փաստաբան նշանակվում է վեց տարի ժամկետով, որոնցից յուրաքանչյուրը վերընտրման իրավունք ունի: Նրանք նշանակվում են ԵՄ երկրների կառավարությունների համաձայնությամբ:

Դատարանին մեծ քանակությամբ գործերի քննության առնչությամբ աջակցելու և քաղաքացիներին լավագույն իրավական պաշտպանություն առաջարկելու նպատակով գլխավոր դատարանը քննում է այն գործերը, որոնք ներկայացվել են մասնավոր անձանց, ընկերությունների և կազմակերպությունների կողմից և այն գործերը, որոնք կապված են մրցակցային իրավունքի հետ:

ԵՄ Քաղաքացիական ծառայության տրիբունալը քննում է Եվրոպական միության և իր անձնակազմի միջև ծագող վեճերը:

Դատարանը որոշումներ է կայացնում իրեն ներկայացված բոլոր գործերով: Դատարանի կողմից առավել հաճախակի քննվող գործերի տեսակներն են՝

– նախնական որոշումները. այս գործերը հարուցվում են այն դեպքում, երբ ազգային դատարանները դիմում են դատարանին՝ ԵՄ օրենսդրության այս կամ այն դրույթը մեկնաբանելու համար,

– գործեր, որոնք կապված են պարտավորությունները չկատարելու հետ. սրանք ուղղված են ԵՄ անդամ երկրների կառավարությունների դեմ, որոնք չեն կիրառում ԵՄ օրենսդրությունը,

– դադարեցման գործողություններ. սրանք ուղղված են ԵՄ այն օրենքների դեմ, որոնք խախտում են ԵՄ պայմանագրերը կամ հիմնարար իրավունքները,

– գործողություններ անգործության դեմ. սրանք գործեր են, որոնք հարուցվում են ԵՄ ինստիտուտների դեմ՝ նրանցից պահանջվող որոշումները չկայացնելու համար,

– ուղղակի գործողություններ. սրանք հարուցվում են ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ կազմակերպությունների կողմից ԵՄ որոշումների կամ գործողությունների դեմ:

Անդրադառնանք գործերի վերը նշված տեսակներից յուրաքանչյուրին առանձին–առանձին:

1. Նախնական որոշման ընթացակարգ

ԵՄ յուրաքանչյուր անդամ պետության ազգային դատարան պատասխանատու է իր երկրում ԵՄ օրենսդրության պատշաճ կատարումն ապահովելու համար: Բայց առկա է վտանգ, որ տարբեր երկրների դատարաններ ԵՄ օրենքներին կարող են տալ տարբեր մեկնաբանություններ:

Որպեսզի վերոգրյալը տեղի չունենա, գոյություն ունի «նախնական որոշում» ընթացակարգը: Եթե ազգային դատարանը կասկածներ ունի ԵՄ օրենսդրության մեկնաբանության կամ կիրառության հետ կապված, ապա կարող է, իսկ որոշ դեպքերում նաև պարտավոր է դիմել Արդարադատության եվրոպական դատարանին՝ խորհրդատվություն ստանալու նպատակով: Այս հիշյալ «խորհուրդն» էլ կոչվում է «նախնական որոշում»[5]:

2. Պարտավորությունները չկատարելու ընթացակարգ

Կոմիտեն այն դեպքում, երբ հիմքեր ունի կարծելու, որ ԵՄ անդամ երկիրն ի վիճակի չէ կատարել ԵՄ օրենսդրությունը ստանձնած պարտավորություններին համապատասխան, կարող է դիմել Դատարան: Հիշյալ հիմքով դատարանում կարող է գործ հարուցել նաև ԵՄ անդամ ցանկացած երկիր:

Ամեն դեպքում դատարանը քննում է այս մեղադրանքները և որոշում կայացնում: Եթե պետությունը մեղավոր է ճանաչվում, ապա պարտավորվում է անհապաղ ուղղել ստեղված իրավիճակը: Եթե դատարանը գտնում է, որ տվյալ երկիրը համապատասխան որոշումը չի կատարում, կարող է նաև տուգանել նշված պետությանը:

3. Դադարեցման գործողություններ

Եթե ԵՄ որևէ անդամ երկիր, խորհուրդը, կոմիտեն կամ որոշ դեպքերում նաև խորհրդարանը գտնում են, որ ԵՄ օրենքներից որևէ մեկը օրինական չէ, կարող են դատարան դիմել հիշյալ իրավական ակտի գործողությունը դադարեցնելու համար:

«Դադարեցման գործողությունները» կարող են կիրառվել նաև մասնավոր անձանց կողմից, որոնք կարող են դիմել դատարանին՝ դադարեցնելու ԵՄ ինստիտուտներից մեկի կողմից ընդունված որևէ կոնկրետ օրենքի, որոշման, կանոնակարգի գործողությունը, եթե այն անմիջականորեն կամ անուղղակի կերպով բացասաբար է ազդում նրանց վրա:

Եթե դատարանը գտնի, որ որոշումները կայացվել են ոչ ճիշտ կամ հիմնված չեն եղել պայմանագրերի վրա, այն կարող է դրանք առ ոչինչ ճանաչել:

4. Անգործության դեմ գործողությունները

Պայմանագիրը պահանջում է Խորհրդարանից, խորհրդից և կոմիտեից կայացնել անհրաժեշտ որոշումներ որոշակի պայմաններում: Եթե նրանք անկարող են գտնվում որոշումներ կայացնել, ապա անդամ երկրները, համայնքների այլ ինստիտուտներ և որոշ դեպքում նաև ֆիզիկական կամ իրավաբանական անձինք կարող են բողոք ներկայացնել դատարան՝ հիշյալ անգործությունը պաշտոնապես գրանցելու համար:

5. Ուղղակի գործողություններ

Ցանկացած անձ կամ կազմակերպություն, որին վնաս է պատճառվել համայնքների կամ իր անձնակազմի անգործության հետևանքով, կարող է դիմել գլխավոր դատարան՝ փոխհատուցում ստանալու խնդրանքով:

Դատարանի իրավասությունների լայն շրջանակը թույլ չի տալիս այն ամբողջությամբ նմանեցնել տարբեր երկրների դատական մեխանիզմներում գոյություն ունեցող դատական իշխանության որոշակի տեսակի: Առաջին ատյանի կամ վերաքննիչ ատյանում գործերի քննության ժամանակ այն համակցում է ընդհանուր իրավասության, վարչական, սահմանադրական, ինչպես նաև միջազգային դատարանի գործառույթներ:

Ռուսաստանի Դաշնության, Գերմանիայի և մի շարք այլ երկրների սահմանադրական դատարանների նման դատարանն իրավասու է քննել պրեյուդիցիալ կարգով (անուղղակի իրավասության գործեր) ԵՄ տարածքում գտնվող բոլոր դատական մարմինների դիմումները, ընդ որում, ան-

www.lawinstitute.am

դամ երկրների բարձրագույն դատական ատյանները ոչ միայն իրավասու են, այլ նաև պարտավոր են դիմել նման հարցումներով:

Անուղղակի իրավասության գործերը այն գործերն են, որոնք ԵՄ դատարանը քննում է անդամ երկրների դատական մարմինների դիմումներով: Ցանկացած ազգային դատարան, որը վեճ է լուծում՝ կապված ԵՄ իրավունքի կիրառման հետ, կարող է, իսկ երբեմն էլ պարտավոր է դիմել արդարադատության դատարան՝ նախնական որոշման ընթացակարգի համար: ԵՄ անդամ երկրների ազգային դատարանների այսօրինակ դիմումները անվանվում են պրեյուդիցիալ, այսինքն՝ դրանք ներկայացվում են մինչև գործով վերջնական որոշում կայացնելը: Ի տարբերություն ուղղակի իրավասությամբ քննվող գործերի, ԵՄ արդարադատության դատարանը այս դեպքում վեճի կարգավորման վերաբերյալ որոշում չի կայացնում. դա անում է ազգային դատարանը գործի փաստական հանգամանքների սեփական գնահատումից հետո, սակայն հարկ է նշել, որ ԵՄ արդարադատության դատարանի որոշումը ենթակա է պարտադիր կատարման պրեյուդիցիալ դիմում ներկայացրած ազգային դատարանի համար:

Եվրոպական միության արդարադատության դատարանը Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի (Եվրատոմի) դատական մարմինն է: Այն կազմված է երեք ատյաններից՝ արդադատության դատարանից, գլխավոր դատարանից և քաղաքացիական ծառայության տրիբունալից: Դրանց առաջնային գործառույթը Եվրոպական միության գործողությունների օրինականության ստուգումն է և Եվրոպական միության իրավունքի միանման մեկնաբանության ու կիրառության ապահովումը:

Դատական նիստը կարող է հրավիրվել լրիվ կազմով՝ մեծ պալատում 13 դատավորների մասնակցությամբ կամ 3-ից 5 դատավորի կազմով պալատներում:

Դատավորներն իրենցից մեկին ընտրում են որպես դատարանի նախագահ՝ երեք տարի ժամկետով՝ վերընտրման իրավունքով: Դատարանի նախագահը ղեկավարում է դատարանի աշխատանքները և մասնակցում է լիակազմ և մեծ պալատի նիստերին:

Դատարանի պլենար (լիակազմ) նիստեր հրավիրվում են դատարանի կանոնակարգով սահմանված հատուկ դեպքերում (օրինակ՝ պաշտոնեական պարտականությունները կատարելու պատճառով եվրոպական օմբուդսմենի պաշտոնանկության կամ եվրոպական հանձնաժողովի անդամի դեմ գործերը քննելիս) կամ, երբ դատարանը գտնում է, որ գործը բացառիկ կարևորություն ունի:

Մեծ պալատի կազմով քննվում են այն գործերը, երբ քննվող գործը բարդ է կամ առանձնակի կարևորություն ունի, կամ գործով կողմ հանդիսացող անդամ երկրներից մեկը խնդրել է այն մեծ պալատի կազմով քննության առնել:

Մյուս գործերը քննվում են 3-ից 5 դատավորի կազմով պալատներում: Հինգ դատավորի կազմով պալատների նախագահներն ընտրվում են երեք տարի ժամկետով, իսկ երեք դատավորների կազմով պալատների նախագահները՝ մեկ տարի ժամկետով:

Արդարադատության եվրոպական դատարանը հանդես է գալիս նաև որպես վերաքննիչ դատարան միայն գլխավոր դատարանի կողմից կայացված դատավճիռների և որոշումների բողոքարկման պարագայում: Եթե վերաքննիչ բողոքը ընդունելի է և բավարար չափով հիմնավորված, ապա ԵՄ արդարադատության դատարանը բեկանում է գլխավոր դատարանի կողմից կայացված դատավճիռը: Վարույթի իրականացման երկրի համաձայնությամբ ԵՄ արդարադատության դատարանը ինքն է լուծում վեճը, այլ կերպ՝ ԵՄ արդարադատության դատարանը գործը վերադարձնում է գլխավոր դատարան, որը պարտավորվում է իրականացնել արդարադատության դատարանի վերաքննիչ բողոքի արդյունքում կայացված որոշումը:

Իր հերթին գլխավոր դատարանն ինքը հանդիսանում է որպես վերաքննիչ դատարան ԵՄ քաղաքացիական ծառայության տրիբունալի կողմից կայացված որոշումների բողոքարկման դեպքում: Այս դեպքում ևս գլխավոր դատարանի՝ որպես վերաքննիչ ատյանի կայացրած որոշումները բացառիկ դեպքերում կարող են վերանայվել ԵՄ արդարադատության դատարանի կողմից՝ համաձայն ԵՄ արդարադատության դատարանի կանոնադրության[6]:

Վստահաբար կարելի է փաստել, որ ԵՄ արդարադատության դատարանը քաղաքական և իրավական դաշտում ունեցած ազդեցությամբ կարող է մրցակցել ազգային գերագույն և սահմանադրական դատարանների և անգամ միջազգային դատարանների հետ:

[1] Տե՛ս Հարությունյան Ա. Շ. Եվրոպական Միության իրավունքի հիմունքները, Երևան, Տիգրան Մեծ հրատարակչություն, 2011թ.:
[2] Տե՛ս Giandomenico Majore "Europe as the Would-be world power", The EU at Fifty, Cambridge University Press, 2009.
[3] Տե՛ս Право Европейского Союза. Под редакцией профессора С.Ю. Кашкина, Учебник для вузов, 3-е издание, переработанное и дополненное, Юрайт, Москва, 2010.
[4] Տե՛ս Mattli, Walter and Slaughter, Anne-Marie, 1998, "Revisiting the European Court of Justice", International Organization, 52(1).
[5] Տե՛ս Mattli, Walter and Slaughter, Anne-Marie, 1998b, "The Role of National Courts in the Process of European Integration: Accounting for Judicial Preferences and Constraints", Hart Publishing, Oxford.
[6] Տե՛ս Panke, Diana, 2007, "The European Court of Justice as an Agent of Europeanization? Restoring Compliance with EU Law", Journal of European Public Policy, 14(6).

Арменуи Арутюнян
Начальник отдела судебных поручений министерства юстиции РА,
аспирант факультета европейского права и юриспруденции
Европейской образовательной региональной академии

РЕЗЮМЕ

Суд Европейского союза как наднациональный орган правосудия Европейского союза

Европейское право является наиболее динамично развивающейся правовой системой нашей современности. В последние годы она претерпела ряд ключевых изменений, которые имеют отношение к процессу европейской интеграции, а также развитию и совершенствованию правовой основы.

Действуя в рамках своей юрисдикции, Суд Европейского союза сформулировал жизненно важные концептуальные положения для развития процесса европейской интеграции, которые и являются предметом изучения настоящей статьи.

***Ключевые слова**: Европейское право, Европейский суд, судебная практика ЕС, правовая система ЕС, институты ЕС, интеграционный процесс.*

Armenuhi Harutyunyan
Head of Division of Judicial Commissions,
Ministry of Justice of the Republic of Armenia, Master in Law,
Graduate student of the European Educational Regional Academy

SUMMARY

Court of the European Union as a supranational authority of justice of the European Union

The European law is the most dynamically developing legal system. In recent years it has undergone a number of key changes that are relevant to the process of European integration, as well as the development and improvement of the legal framework.

Acting within its jurisdiction, the Court of the European Union has made vital conceptual provisions for the development of European integration, which are the subject of this article.

***Keywords**: European law, the European Court jurisprudence of the EU, the legal system of the EU, the EU institutions, the integration process.*